Նախաբան

Այս դասը կազմված է 4 հատվածից *(մոտիվացնող ներածական տեսանյութ, դասի տեսական նյութ, բառարան և ինքնաստուգիչ հարցեր), որի ընդհանուր տևողությունն է 240 րոպե։*

Սույն հեռաուսուցման դասի այս հատվածը յուրացնելու համար հարկավոր է 15 րոպե։

Սույն հեռաուսուցման դասընթացն իր տեսակի մեջ Հայաստանում առաջինն է, որտեղ համալիր ներկայացվում և քննարկվում են Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (ՄԻԵԴ) վճիռների կատարմանն առնչվող հարցեր: Դասընթացի շրջանակում նաև շոշափվելու են ներպետական օրենսդրության մեջ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) իրավական չափանիշների ներդրման հետ կապված որոշակի խնդիրներ :

Դասընթացը հատուկ մշակվել է գործող դատավորների և դատախազների համար: Այն օգտակար կլինի նաև բոլոր այն պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների համար, ովքեր ներգրավված են ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին: Դրա հետ մեկտեղ, այն կարող է հետաքրքրել նաև մյուս հանրային ծառայողներին, փաստաբաններին ու այլ մասնագետներին, ովքեր զբաղվում են ոլորտին առնչվող, ներառյալ՝ մարդու իրավունքների միջազգային և եվրոպական չափանիշների ներդրման հիմնահարցերով:

Դասընթացն արտացոլում է գործող դատավորների և դատախազների գործառույթների իրականացման հետ կապված տարաբնույթ խնդիրներ:
Այն ընդգծում է տվյալ պետական մարմինների և առհասարակ՝ պետության համար ՄԻԵԴ վճիռների կատարման կարևորությունը, ներկայացնում գործընթացին մասնակցող միջազգային և ազգային գլխավոր դերակատարների, ինչպես նաև հիմնական շահառուների դերը:

Մասնակցելով դասընթացին, հետևելով ցուցումներին և պատասխանելով ինքնաստուգիչ հարցերին՝

1. Կիմանաք, թե ի թիվս այլնի՝ (1) ինչ է իրենից ներկայացնում ՄԻԵԴ վճիռների կատարումը, (2) որն է դրա էությունն ու նպատակը, (3) որոնք են վճիռների կատարման կառուցակարգերը, այդ գործընթացին մասնակցող գլխավոր դերակատարներն ու հիմնական շահառուները.

2. Կկարողանաք հստակ պատկերացնել, թե ի թիվս այլնի՝ (1) ինչպիսին է ՄԻԵԴ վճիռների կատարման և կատարման նկատմամբ վերահսկողության հարաբերակցությունը, (2) որոնք են դա կարգավորող ներքին և արտաքին իրավական գործիքներն ու կառուցակարգերը, (3) որքանով է ՄԻԵԴ վճիռների կատարումը նպաստում պետության արտաքին ու ներքին վարկանիշի բարձրացմանը.

3. Կտիրապետեք այն գիտելիքներին և կարողություններին, որոնք հնարավորություն կտան, ի թիվս այլնի՝ (1) պարզելու, թե որոնք են և որտեղ են ՄԻԵԴ վճիռների կատարումն ապահովող իրավական գործիքները, (2) տեսնելու, թե որոնք են և ինչպիսին են այն կառուցակարգերը, որոնց արդյունավետ գործարկումը նպաստում է մարդու իրավունքների պաշտպանությանը (protection) և խթանմանը (promotion), (3) բացահայտելու, թե որն է օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների դերը, ինչպես նաև Գլխավոր դատախազության մասնակցության կարևորությունը Սահմանադրությամբ ու միջազգային պայմանագրերով պետության ստանձնած պարտավորությունների կատարման գործում:

*Սույն հեռաուսուցման դասընթացի շրջանակում «վճիռների կատարում» (execution of judgments) արտահայտությունը կիրառվում է առավել ընդգրկուն իմաստով՝ իր մեջ ներառելով և՛ ՄԻԵԴ վճիռների (judgments), և՛ ՄԻԵԴ որոշումների (decisions) կատարումը (իմպլեմենտացիան):

*Դասընթացը մշակվել է «Աջակցություն Հայաստանի կողմից Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով կայացված վճիռների կատարմանը» Եվրոպայի խորհրդի ծրագրի շրջանակում:

Ներածություն

Կարդացեք ներածությունը՝ հատկապես ուշադրություն դարձնելով այն հարցերի հերթականության վրա, որի շրջանակում ներկայացվելու է սույն հեռաուսուցման դասընթացը:

Սույն հեռաուսուցման դասի այս հատվածը յուրացնելու համար հարկավոր է 20 րոպե:

Հայաստանն ունի երկար տարիների փորձ ՄԻԵԴ վճիռների ինտենսիվ կատարման: Առնվազն վերջին (շուրջ) տասը տարիներին ՄԻԵԴ վճիռների կատարումը Հայաստանում եղել է բավականաչափ հաջողված, երբեմն՝ օրինակելի ԵԽ մյուս անդամ պետությունների համար: Դա նշանակում է, որ վճիռների կատարման հայաստանյան մոդելը, իր դրական հետագծով, համեմատության մեջ եղել է արդյունավետ և որոշակիորեն զարգացել է ժամանակի մարտահրավերներին համընթաց:

Դրա հետ մեկտեղ, ՄԻԵԴ իրավաբանության և ԵԽ մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների զարգացմանը զուգահեռ կատարելագործվում է վճիռների կատարման եվրոպական համակարգը, նորովի օգտագործվում են առկա լայն հնարավորություններ: Դրանց մասին իմացությունը, գործընթացի առանձնահատկությունների մասին պատկերացումներն անհրաժեշտ են առանձին պետական կառույցների ու շահագրգիռ հաստատությունների համար: Ուստի, օբյեկտիվորեն կարիք է զգացվում տվյալ գործընթացին ապահովել իրավասու պետական մարմինների, ներառյալ՝ դատախազության և դատական մարմինների ակտիվ ներգրավվածությունն ու մասնակցությունը: Այստեղ նկատենք, որ տվյալ մարմինները կարևոր դերակատարում ունեն նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի (ՄԻԵԿ կամ Կոնվենցիա) չափանիշներն օրենսդրության մեջ ու պրակտիկայում ներդնելու գործում:

Ի՞նչ եք կարծում՝ ինչպե՞ս է արտահայտվում ՄԻԵԿ չափանիշների ներդրման (իմպլեմենտացիայի) գործում դատախազության և դատարանների դերակատարումը:

Վերը նշվածով պայմանավորված՝ գործող դատավորների և դատախազների համար սույն հեռաուսուցման դասընթացը կարող է լինել օգտակար ինչպես ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մասնակցության արդյունավետության, այնպես էլ ՄԻԵԿ չափանիշների՝ ներպետական օրենսդրության մեջ ներդնելու, հետագայում արձանագրված խախտումները կանխելու կամ բացառելու տեսանկյունից:

Վերը նշվածով պայմանավորված՝ գործող դատավորների և դատախազների համար սույն հեռաուսուցման դասընթացը կարող է լինել օգտակար ինչպես ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մասնակցության արդյունավետության, այնպես էլ ՄԻԵԿ չափանիշների՝ ներպետական օրենսդրության մեջ ներդնելու, հետագայում արձանագրված խախտումները կանխելու կամ բացառելու տեսանկյունից:

Դասընթացը կառուցված է տրամաբանորեն շաղկապված առանձին թեմաներից, որոնք Ձեզ ներկայացվելու են տարբեր դասերի միջոցով: Թեև թեմաները միմյանց հետ կապված են, այնուամենայնիվ յուրաքանչյուր նոր թեմայի (դասի) յուրացումն ավտոնոմ է, այսինքն՝ այն կարող է յուրացվել նախորդ թեմայի իմացությունից անկախ: **Դասընթացի շրջանակում ներկայացված թեմաների ընտրությունը պայմանավորված է Կոնվենցիայի իրավական չափանիշների կիրառման հետ կապված խնդիրներով, որոնք գործնականում ի հայտ են գալիս:** Բացի դրանից, սույն հեռաուսուցման դասընթացի միջոցով նպատակ է դրվում ապահովել դրա մասնակիցների թիրախային և հստակ եղանակներով իրազեկվածությունը՝ ներառյալ մատուցված տեսական նյութը կամրջելով գործնականում հանդիպող խնդիրների հետ:

Առաջին դասի ժամանակ Դուք ծանոթանալու եք ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին: **Ընդ որում, շեշտադրվելու են հետևյալ հարցերը՝**

1)ՄԻԵԴ վճիռների կատարման էությունը և նպատակը,

2)ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի ընդհանուր նկարագրությունը,

3)ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մասնակցող գլխավոր դերակատարները և հիմնական շահառուները,

4)ՄԻԵԴ վճիռների կատարման և կատարման նկատմամբ վերահսկողության հարաբերակցությունը:

Այնուհետ՝ *երկրորդ դասին* Ձեզ ներկայացվելու է, թե որոնք են և ինչպիսին են ՄԻԵԴ վճիռների կատարումն ապահովող իրավական գործիքներն ու կառուցակարգերը: **Այստեղ շեշտը դրվելու է հետևյալ հարցերի վրա՝**

1)ՄԻԵԿ 39 րդ, 41-րդ և 46-րդ հոդվածների նշանակությունն ու կիրառումը ՄԻԵԴ վճիռների կատարման համատեքստում,

2)ԵԽ Նախարարների կոմիտեի վերահսկողությունը ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ,

3)ՄԻԵԴ վճիռների կատարմանն առնչվող ԵԽ հռչակագրերը,

4)ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի սահմանադրահիրավական հիմքերը,

5)Ինչպես նաև ՄԻԵԴ վճռից հետո գործերի վերաբացման միջազգային և ներպետական կառուցակարգերը՝ որպես վճիռների կատարման կարևոր տարր:

Երրորդ դասը նվիրված է ՄԻԵԴ վճիռների կատարման ու կատարման նկատմամբ վերահսկողության հարաբերակցությանը: **Դրանում ներկայացվելու են մի քանի կարևոր հարցեր, ներառյալ՝**

1)ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության երկաստիճան կամ երկընթաց (twin-track) մեխանիզմները,

2)կատարման ենթակա ՄԻԵԴ վճիռների (գործերի) դասակարգումը, դրանց տեսակները,

3)գործողությունների ծրագրերը (action plans) և գործողությունների հաշվետվությունները (action reports)՝ որպես ՄԻԵԴ վճիռների կատարման նկատմամբ վերահսկողության գործիքակազմ:

Չորրորդ դասի շրջանակում Ձեզ ներկայացվելու է ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի ԵԽ կառուցակարգերի ու դերակատարների շրջանակը: **Շեշտադրվելու են հետևյալ հարցերը՝**

1)ՄԻԵԴ դերը վճիռների կատարման գործընթացում,

2)ՄԻԵԴ վճիռների նկատմամբ Նախարարների կոմիտեի վերահսկողությունը Մարդու իրավունքների նիստերի (CM-DH meetings) միջոցով,

3)ՄԻԵԴ վճիռների կատարմանն առնչվող Նախարարների կոմիտեի միջանկյալ և վերջնական ռեզոլյուցիաներն ու որոշումները:

Եվ վերջին՝ հինգերորդ դասն այն մասին է, թե որոնք են ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացի ներպետական կառուցակարգերն ու դերակատարները: **Այստեղ առանձնակի ուշադրության կենտրոնում են լինելու հետևյալ հարցերը՝**

1)Նախարարների կոմիտեի վերահսկողության ներքո գտնվող՝ Հայաստանի մասով վճիռների/վճիռների խմբերի կատարման վիճակը,

2)օրենսդիր, գործադիր և դատական իշխանության մարմինների դերը, ինչպես նաև Գլխավոր դատախազության մասնակցությունը ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին,

3)ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին մարդու իրավունքների

ազգային հաստատության (NHRI) և կանխարգելման ազգային մեխանիզմի (NPM), ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներգրավման անհրաժեշտությունը,

4)Հայաստանի Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի դերը և գործառույթները ՄԻԵԴ վճիռների կատարման գործում, ինչպես նաև ոլորտում պետական իրավասու մարմինների միջև փոխգործակցությունը:

Այսպիսով, սույն հեռաուսուցման դասընթացի թեմաների բավարար յուրացման դեպքում կիմանաք, թե ինչպես են կատարվում ՄԻԵԴ վճիռներն ընդհանրապես և կոնկրետ Հայաստանում: Դրա հետ մեկտեղ, կունենաք բավարար խորությամբ պատկերացումներ վճիռների կատարման գործընթացի առանձնահատկությունների մասին, որոնք օգտակար կլինեն Ձեր մասնագիտական գործունեության ժամանակ:

ԴԱՍ 1

ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

Սույն հեռաուսուցման դասի այս հատվածը յուրացնելու համար հարկավոր է 110 րոպե:

Ինքնաստուգիչ հարցերը և բացատրություններով ուղեկցվող դրանց պատասխանները ներառված չեն այս փաստաթղթում: Դրանք առանձին փաստաթղթերով ներկայացված են հեռաուսուցման փաթեթում:

ՄՈՏԻՎԱՑՆՈՂ ՆԵՐԱԾԱԿԱՆ ՏԵՍԱՆՅՈՒԹ

Տեսանյութն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 5 րոպե:

(հասանելի է Արդարադատության ակադեմիայի կայքի հեռաուսուցման բաժնում)

Կարդացեք առաջին դասի տեքստը՝ ուշադրություն դարձնելով ենթաթեմաներում ընդգծված տերմիններին և արտահայտություններին:

Տեքստը յուրացնելուց հետո անցեք դասի հաջորդ մասերին (բառարան, ինքնաստուգիչ հարցեր):

Առաջին դասի ընթացքում Ձեզ ներկայացվելու են մի քանի թեմաներ, որոնք սկզբունքորեն կարևոր են պատկերացնելու համար, թե ինչ է իրենից ներկայացնում ՄԻԵԴ վճիռների կատարումն ընդհանրապես: Խոսվելու է այն մասին, թե որն է ՄԻԵԴ վճիռների կատարման էությունն ու նպատակը, ինչ նկարագիր ունի ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացը, որոնք են այդ գործընթացին մասնակցող գլխավոր դերակատարներն ու հիմնական շահառուները: Դրանից բացի, ընդհանուր ցույց է տրվելու, թե որն է ՄԻԵԴ վճիռների կատարման և կատարման նկատմամբ վերահսկողության հարաբերակցությունը, որի մասին առավել մանրամասն խոսվելու է հաջորդ դասերի շրջանակներում:

1.1 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

Դատական ակտերի կատարումն արդարադատության անբաժանելի մասն է: Հնարավոր չէ ապահովել արդարադատության լիարժեք իրականացում, եթե չկան հստակ մեխանիզմներ կատարելու (իրացնելու) դատական այն ակտերը, որոնք ընդունվում են արդարադատության արդյունքում: Նույն տրամաբանությունը գործում է նաև մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների, տվյալ դեպքում՝ ՄԻԵԴ ի ընդունած վճիռների (որոշումների) կատարման մասով: Ավելին՝ **հատկանշական է, որ ըստ ՄԻԵԴ-ի՝ վճռի կատարումը հենց «դատաքննության» (trial) անբաժանելի մասն է:**

Որքան զարգացած է ՄԻԵԴ վճիռների կատարման կառուցակարգը Եվրոպայի խորհրդի կոնկրետ անդամ պետությունում, այնքան մեծ է տվյալ երկրում եվրոպական իրավական չափանիշների ներքո մարդու իրավունքների ապահովման գործիքակազմի շրջանակը: Այս առումով, Հայաստանի՝ որպես ԵԽ անդամ պետության համար ոչ միայն կարևոր է, այլև մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման տեսանկյունից հեռանկարային է ՄԻԵԴ վճիռների արդյունավետ կատարումը: Եվ դա բխում է պետության ստանձնած պարտավորություններից:

Իսկ ի՞նչ է ընդհանրապես ՄԻԵԴ վճիռների կատարումը. ո՞րն է դրա էությունը, ո՞րն է դրա նպատակը:

Իսկ Դուք գիտե՞ք, թե երբ է Հայաստանն անդամակցել Եվրոպայի խորհրդին և երբ է վավերացրել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի համաձայն՝ **Բարձր պայմանավորվող կողմերը**, այսինքն՝ ԵԽ անդամ պետությունները, տվյալ դեպքում՝ նաև Հայաստանը, պարտավորվում են կատարել Եվրոպական դատարանի՝ Կոնվենցիայի խախտում արձանագրող **վերջնական վճիռները** (հոդված 46): Այդ վճիռների կատարումը ենթարկվում է ԵԽ հստակ մեխանիզմներով վերահսկողության:

Բարձր պայմանավորվող կողմերը կատարում են նաև ՄԻԵԴ-ի ընդունած այն որոշումները, որով ապահովվել է **բարեկամական կարգավորում** կամ հաշտության համաձայնություն (հոդված 39) և որոնց վերահսկողությունը նույնպես հստակ է Կոնվենցիոն իրավակարգավորումներով:

Իսկ եթե ավելի պարզ՝ ՄԻԵԴ կողմից Կոնվենցիայի խախտման վերաբերյալ վճիռ կայացնելուց հետո համապատասխան պետությունը, որը դատարանում քննության ընթացքում հանդես է գալիս որպես պատասխանող պետություն, պարտավոր է ենթարկվել տվյալ վճռի պահանջներին, այլ կերպ ասած՝ պարտավոր է կատարել վճիռը: Վճռի կատարման պարտավորությունը սկսվում է այն վերջնական դառնալուց հետո: Վճռի կատարման նկատմամբ վերահսկողությունն էլ իրականացվում է Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի կողմից:

Հավելյալ կարելի է նշել, որ ՄԻԵԴ ընդունած ցանկացած վճիռ, որում արձանագրվում է Կոնվենցիայով երաշխավորած իրավունքի կամ ազատության խախտում, իր մեջ ներառում է դատարանի **գնահատականն ու դիրքորոշումը** պետության կոնկրետ գործողության կամ դրա բացակայության վերաբերյալ (ներառյալ՝ շոշափելով օրենքի կոնկրետ բացի կամ օրենքի որակի հետ կապված հարցեր, կամ բարձրացնելով իրավակիրառ պրակտիկայի՝ ՄԻԵԿ չափանիշներին անհամապատասխանության հետ կապված խնդիրներ և այլն): Անհրաժեշտ է նշել, որ արձանագրված խախտման կամ խախտումների հետևանքները վերացնելու իրավական պարտականությունը, փաստորեն, դրված է բացառապես ԵԽ անդամ այն պետության (կամ պետությունների) վրա, որը միջազգային դատական քննության ընթացքում հանդես է եկել որպես պատասխանող կողմ:

Այս ամենը կոչված է բացառելու կամ թույլ չտալու (կամ առնվազն նվազագույնի հասցնելու) բոլոր այն հնարավորությունները, որոնց պարագայում կարող են կրկնվել դատարանի արձանագրած խախտումները: Հենց սա էլ, անհատական մակարդակում խախտված իրավունքները վերականգնելու հետ միասին, վճիռների կատարման **հիմնական նպատակն է:** Այդ ընդհանուր նպատակին էլ ուղղված են ինչպես ԵԽ կառույցների, այնպես էլ ներպետական հաստատությունների ջանքերը:

1.2 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոնվենցիայի խախտում արձանագրող վճռի կատարումն անմիջապես սկսվում է վճռի վերջնական դառնալուց հետո: Թեև այն կարող է սկսվել նույնիսկ մինչև վերջնական դառնալը՝ հատկապես, եթե պետությունն ընդունում է, որ կան

համապատասխան միջոցառումների անհրաժեշտություն:

Քանի որ վճռի կատարման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է Նախարարների կոմիտեն, նրա սահմանած կանոններով էլ, ըստ էության, ապահովվում է կատարման ամբողջ գործընթացը:

Անդամ պետությունները, կրելով վճռով արձանագրված խախտումների հետևանքները վերացնելու իրավական պարտականությունը, ունեն անհրաժեշտ միջոցների և միջոցառումների ընտրության որոշակի **[թույլատրելի] հայեցողության շրջանակ** *(a margin of appreciation):*

Հայաստանի վերաբերյալ առաջին վճռին կարող եք ծանոթանալ ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչության պաշտոնական կայքում www.echr.am հղումով:

ՄԻԵԿ նախաբանում (պրեամբուլայում) արտացոլված սուբսիդիարության սկզբունքից՝ պատասխանող պետությունն է որոշում այն ձևերն ու միջոցները կամ միջոցառումների շրջանակը, որով պետք է կատարի վճիռը, բայց նրա հայեցողությունն անսահմանափակ չէ և ենթակա է վերահսկման Նախարարների կոմիտեի սահմանած գործիքակազմով:

Որպես կանոն, վճիռների շրջանակներում ձեռնարկվող միջոցներն ու միջոցառումները լինում են երկու բնույթի.

- անհատական միջոցներ (individual measures),
- ընդհանուր միջոցներ (general me

Այդ ընդհանուր և անհատական միջոցների շնորհիվ պետությունները հնարավորին չափ վերականգնում են թույլ տրված իրավախախտումը, վերացնում են հետևանքները, ընդ որում՝ ինչպես օրենսդրության կատարելագործման, այնպես էլ իրավակիրառ պրակտիկայի վերանայման միջոցով՝ դրանով իսկ նպաստելով մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմների կատարելագործմանը:

1.3 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԳԼԽԱՎՈՐ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԸ

Քանի որ, ինչպես նշվեց, պետությունն ինքն է որոշում վճռի կատարման միջոցներն ու միջոցառումները, այսինքն՝ թե ինչ և ինչպես պետք է կատարել ՄԻԵԴ վճռում ներկայացված այս կամ այն պահանջը, հետևաբար պետությունն էլ որոշում է, թե կոնկրետ վճռի կատարման համար որ մարմիններն ու պաշտոնատար անձինք են պատասխանատու: Այլ կերպ՝ որոշում է այն մարմինների շրջանակը, որոնք իրավասու են վերացնելու արձանագրված կամ նմանատիպ խախտումները:

Այնպես է ստացվել, որ Հայաստանում որպես վճիռների կատարման գործի հիմնական և միակ պատասխանատու տարիներ շարունակ դիտվել է ՄԻԵԴ ում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչը **(ներկայում անվանվում է՝ Միջազգային իրավական հարցերով ներկայացուցիչ):**

Նման մոտեցումը, անշուշտ, ունի օբյեկտիվ հենք, բայց կարևոր է գիտակցել, որ այս գործում մեծ դերակատարում ունեն որոշակի պետական այլ մարմիններ նույնպես: Այստեղ կարևոր է նշել դատական իշխանության և դատախազության դերակատարման կարևորությունը, որոնք կիսում են **«բաշխված պատասխանատվություն»** (shared responsibilities) և ունեն որոշակի պարտավորություն՝ ուղղված ՄԻԵԴ վճիռների արդյունավետ կատարմանը:

Այդ դերակատարման կարևորությունը կրկնապատկվում է՝ հատկապես, եթե հաշվի առնենք, որ և՛ դատարանների, և՛ դատախազության դերը միջազգային իրավական չափանիշներն օրենսդրության մեջ ու պրակտիկայում ներդնելու գործում ունի ռազմավարական նշանակություն:

Ինչ վերաբերում է վճիռների կատարման հիմնական շահառուներին, ապա անհատական մակարդակում դրանք առաջին հերթին ՄԻԵԴ գանգատ ներկայացրած անձինք են՝ դիմումատուները, նրանց իրավահաջորդները, ում կոնվենցիոն իրավունքների խախտում է արձանագրել է ՄԻԵԴ-ը: Ընդհանուր մակարդակում շահառու են բոլոր նրանք, ովքեր ազգային դատարաններում կամ պետական մարմիններում հետամուտ են լինում Կոնվենցիայով երաշխավորված իրենց իրավունքների պաշտպանությանը: Այս հարցում կարևոր դեր ունեն նաև մ**արդու իրավունքների ազգային հաստատությունները** *(NHRI)*, ինչպես նաև քաղաքացիական հասարակությունը կամ մարդու իրավունքների պաշտպանության և խթանման հարցերով զբաղվող հասարակական կազմակերպությունները:

Հարց է առաջանում, թե ինչպես են, օրինակ, դիմումատուները մասնակցում վճիռների կատարմանը: Իհարկե, սրա մասին առավել մանրամասն տեղեկատվություն Ձեզ ներկայացվելու է համապատասխան դասի ընթացքում, պարզապես այս պահին նշենք, որ կան սահմանված հստակ գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս շահառուներին ոչ միայն մասնակցել վճիռների կատարման գործընթացին, այլև ազդել այդ գործընթացի և որոշումների կայացման վրա:

Նախքան առաջին դասի վերջին ենթաթեմային անցնելը՝ դիտեք տեսանյութը: Այն հասանելի է ստորև ներկայացված հղումով, որտեղ կգտնեք նաև հայերենով տարբերակը՝ https://www.coe.int/en/web/execution/supervision-video#{%2215024530%22:[1]}

Տեսանյութը դիտելուց հետո.
1) պատասխանեք հետևյալ հարցերին՝ ի՞նչ է արդարացի փոխհատուցումը և ի՞նչ նպատակով է այն որոշվում,
2) մտաբերեք պետության կողմից ի շահ դիմումատուի ձեռնարկվող այլ միջոցների առնվազն երկու օրինակ:

1.4 ՄԻԵԴ ՎՃԻՌՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

ՄԻԵԴ վճիռը կատարելու առաջնային պարտականություն ունեցող սուբյեկտը պետությունն է, իսկ կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող միջազգային հաստատությունը՝ **Նախարարների կոմիտեն:**

Շատ կարևոր է, սակայն, հստակ նկատել, որ երկուսն էլ ունեն իրենց առաջ դրված խնդիրներ և այդ խնդիրներն ուղղված են (պետք է ուղղված լինեն) մեկ միասնական նպատակի՝ վերականգնել խախտած իրավունքները և կանխել հնարավոր նմանատիպ խախտումներն ապագայում:

Այս համատեքստում՝ կարևոր է նշել, որ պետությունների կողմից վճիռների կատարման արդյունավետությունը պայմանավորված է երկու հանգամանքով՝

- նախ՝ պետք է հատուկ կարևորություն տրվի Նախարարների կոմիտեի ընթացակարգերին և աշխատանքային մեթոդներին,
- երկրորդ՝ ոչ պակաս կարևոր է ազգային իշխանությունների տեսլականը,

այսինքն՝ այն, թե ինչպես է պետությունը տեսնում այս կամ այն ռազմավարական գործողության առաջնահերթությունն ու կատարման տրամաբանությունը կոնկրետ գործով (կոնկրետ վճռի կատարման մասով):

Այս հարաբերակցության հստակ ձևակերպումը կարող է կարևոր գործիք լինել ՄԻԵԴ վճիռների կատարման համար, հետևաբար կարևոր լինել նաև մարդու իրավունքների խախտումների վերականգնման արդյունավետության տեսանկյունից:

Իսկ այս ամենի մասին առավել հանգամանալիս դուք կիմանաք մասնակցելով հաջորդ դասերին:

ԲԱՌԱՐԱՆ

Այս հատվածում ներկայացված են դասի նյութին առնչվող առանցքային եզրույթները և դրանց բացատրությունները: Դրանք Ձեզ կօգնեն դասի նյութն ավելի հեշտ ընկալել: Եզրույթների բովանդակությունն ուշադրությամբ ուսումնասիրելու համար անհրաժեշտ է մոտ 50 րոպե:

Ուշադրությամբ ծանոթացեք տերմիններին (կոնցեպտներին), իսկ դասի տեքստի յուրացման հետ կապված դժվարությունների դեպքում կրկին անդրադարձեք դրանց:

ԲԱՌԱՐԱՆ

Բարձր պայմանավորվող կողմ	Եվրոպայի խորհրդի անդամ պետություն, որը վավերացրել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան:
Վերջնական վճիռ	Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռ, որը դարձել է վերջնական, այսինքն՝ մտել է ուժի մեջ:
Բարեկամական կարգավորում	Կոնվենցիայով նախատեսված հնարավորություն է, որի շրջանակում գործի քննության ընթացքում դիմումատուն և պատասխանող կառավարությունը լուծում են առկա վեճը: Այն կողմերի միջև պայմանավորվածություն է, որը շատ նման է ներպետական օրենսդրության մեջ առկա հաշտության համաձայնության ինստիտուտին:
[Թույլատրելի] հայեցողության շրջանակ	Իրավական այս դոկտրինի ներքո ԵԽ մարմինները, ներառյալ՝ ՄԻԵԴ-ը, ճա-նաչում են անդամ պետության հայեցողության որոշակի սահմաններ, որի շրջանակում պետությունն ազատորեն կատարում է Կոնվենցիայով նախատեսված իր պարտավորությունները:
Անհատական միջոց	Վճռի կատարման շրջանակներում ձեռնարկվող միջոց/միջոցառում, որը կոչված է վերացնելու արձանագրված խախտման հնարավոր բացասական հետևանքները դիմումատուի համար (օրինակ՝ գործի դատական քննության վերաբացում, ծնողի և երեխայի միջև կապի վերականգնում, արդարացի փոխհատուցման վճարում և այլն)

Ընդհանուր միջոց	ՄԻԵԴ վճռով արձանագրված նմանատիպ խախտումները հետագայում կանխելու նպատակով ձեռնարկված միջոց/միջոցառում, որն անհատական բնույթի չէ (օրինակ՝ նոր օրենքի ընդունում, օրենսդրության կամ պրակտիկայի վերանայում և այլն):
Վերահսկողություն	Ընթացակարգ, որի ներքո Նախարարների կոմիտեն հատուկ այդ նպատակով որդեգրած մեթոդներով և սահմանված կանոն-ներով ու պրակտիկայով հետևում է ՄԻԵԴ վճիռների կատարման գործընթացին:
Մարդու իրավունքների ազգային հաստատություն	Պետական մարմին, որն անկախ է կառավարությունից, ունի լայն սահմանադրական կամ այլ իրավական մանդատ՝ պաշտպանելու և խթանելու մարդու իրավունքներն ազգային մակարդակում (Հայաստանում՝ Մարդու իրավունքների պաշտպանը)

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Կարդացեք լրացուցիչ նյութերը՝ որքանով հնարավորություն է տալիս օտար լեզվի Ձեր իմացությունը: Սա չի նշանակում, որ առանց տվյալ նյութերի ընթերցման հնարավոր չէ լիարժեք յուրացնել դասի բովանդակությունը, բայց նշված լրացուցիչ աղբյուրները կօգնեն առավելապես պատրաստված լինել մյուս դասերին, ինչպես նաև վեր հանել նոր հարցեր և մտածել դրանց ուղղությամբ նույնպես:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՆՅՈՒԹԵՐ

Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի բառարան. Անգլերեն-Հայերեն, Հայերեն-Անգլերեն,	**https://bit.ly/3EgMxwB**
Վճիռների կատարման ընդհանուր նկարագիրը, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչության պաշտոնական կայք,	**https://echr.am**
Վճիռների կատարման ընդհանուր նկարագիրը, ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցչության պաշտոնական կայք,	**https://bit.ly/3M78bpI**
Հայաստանի Հանրապետության կողմից Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճիռների կատարման վիճակը: Ուսումնասիրություն (2007-2015 թթ.), Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ,	**https://bit.ly/37st7sq**
Исполнение постановлений Европейского Суда // В кн.: Д. Харрис, М. О'Бойл и К. Уорбрик, Право Европейской конвенции по правам человека, сс. 238 263	**-**